


4663

ԿԱՐՄԻՐ ԳԱՆՁԱԿ

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 10-ԱՄՅԱԿԻՆ



Գանձակի նոր բացվելիք չքի գործարանը

1927 թ. 7 ՆՈՅԵՄԲԵՐԻ

9(47.924)

4-33

Կ Ե Ր Մ Ի Ր Գ Ե Ն Չ Ե Կ Ղ

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ՏԱՍՆԱՄՅԱԿԻՆ

1917-1927

24 JAN 2006

ՊԱՏՄԱԿՈՆ ՏԱՍՆԱՄՅԱԿԸ

Հոկտեմբերյան I-ին տասնամյակը, այսօր խոշոր և կարմիր տառերով մտնում է մարդկային դասակարգային պայքարի պատմության մեջ, վորպես մի դափնյա հաղթանակ կապիտալիստական դասակարգի վրա:

Այսօր յերբ անցնում է Հոկտեմբերյան հե-

ղափոխության I-ին 10-ամյակը, արդեն ակներև է այն իլիուզիաները, վորով դեռ մինչև այժմս ապրում են մեր թշնամիները արտասահմանում, վորոնք համրում են որեր, շաբաթներ, տարիներ, թե յերբ կլինի, վոր նրանք նորից «վերադառնան» հայրենիք և «փրկեն» ժողովրդին սովետների «լծից»: Այսօր յերբ մեր ամբողջ խոր-



В. И. ЛЕНИН
ИНСТИТУТ
ВОСТОЧНОЙ
Ленинск
СССР

Վ. Ի. Լենին

հրրդային Միությունը իր բոլոր անկյուններում հանդիպում է Հոկտեմբերի 10-ամյակին նորամտեսական և կուլտուրական հաղթանակներով, այսօր յերբ պրոլետարիատը և աշխատավոր մասսան, հաստատուն կերպով կառուցում են սոցի-

ալիզմի շենքը, մեր թշնամիները՝ պ. պ. մենշևիկները, դաշնակներն ու մուսավաթիստները կաշառված իմպերիալիստական վոսկիներով ջանքեր են գործ դնում նպաստելու խորհրդային իշխանության անկմանը:

4663

Նրանք զեռ անամոթաբար շարունակում են հավատացնել, վոր մասսան իրանց հետ ե, մի-տյն խանգանում են բողջիկները: Հարց ե ա-ուաջ գալիս, ապա ում վրա յե հենվում Սորհրդ-դային իշխանութիւնը.—միմիայն պրոլետարի-տաի, աշխատավոր գյուղացիութեան և պան-ծալի կարմիր Բանակի վրա.—մի գուցե տակի մնացածին են հաշվում մասսա՝ նեպոմաններին և կուլակներին, դա ուրիշ հարց ե...

Այսոր աշխատավորներ խիտ շարքերը կա-րող են վերջնականապես ապացուցել մեր բոլոր մեծ ու պատիկ թշնամիներին, վոր նրանց նո-մերը չի անցնի: Չե՞ վոր մասսան արդեն տեսել ե պ. պ. Փորդանիայի Սատիսֆակցիոնի և մուսա-վաթիստների պատկերները: Չե՞ վոր նրանք ելին, վոր այրեցին բազմաթիվ գյուղեր, քանդեցին կամուրջներ, շենքեր: Չե՞ վոր նրանք ելին ավե-րեցին յերկիրը թալանով ու կոտորածով: Մի գուցե Փարզի կաֆեշանտաններում նրանք «մո-ուացել են» այդ բոլորը: Մի գուցե նրանք նույն-խակ կարծում են, վոր մասսան ել ե «մուացել» նրանց արարքները:

Այդ մասին կարող են միայն հավերն ու մեռելները մոռանալ. իսկ պատմութեան ու փաս-տերի ձեռքից, դուք հեռուն չեք գնալ՝ պարո-նայք: Միթե կարելի յե մոռանալ Բագվի կոմու-նայի անկումը և 26-ի անփոխարինելի կորուս-տը. միթե կարելի յե մոռանալ ազգամիջյան կո-տորածը Բագվում, Յերևանում. միթե կարելի յե մոռանալ Գանձակի և Ղարաբաղի կոտորած-ները Ազրբեջանում, Չանգիբասարի և Վեդիբա-սարի կոտորածները Հայաստանում և այլն, և այլն...

Մենք այսոր նոր փաստեր և նոր օվյայններ ունենք նկարագրելու մասսայի առջև Հոկտեմբե-րից 10 տարի առաջ խոփկ օված պարոնների պատկերը, ինչպես որինակ պ. «սոց.» կերենակու պատկերը:

Ո՞վ եր կերենակին. ասում են վոր «սոցի-ալիստ» ե և «մասնակցել» ե 1917 թվ. փետրը-վարյան հեղափոխութեանը: Իսկ թե ինչպես ե մասնակցել, այդ մասին թող խոսի նրա բարե-կամ Շուրիկը: (Նախկին գումայի անգամ ե յե-զեր, թունդ մանարխիստ և կիսում խմբագրել ե մանարխիստական «Կիլիման» թերթը) նա ի-

րեն գրքում «ДНИ» (որեր) վերնագրով, նկարա-գրում ե թե ինչպես Նիկոլայը հրաժարվում ե գահից հոգուա իր յեղբայր Միխայիլ. ահա այդ ժամանակ գումայի մի շարք անդամներ իհարկե և կերենակին, խորհրդակցում են այն մասին թե՞ հարկավոր ե «ընդունել» գահը, թե վոչ: Ինչ ե ասում այդ մասին «սոցիալիստ» կերենակին այն ժամանակ, յերբ պրոլետարիատը փողոցում պայ-պաքար եր մղում, ցարիզմը վերջնականապես խորտակելու համար: Նա ասում ե Միխայի Ռո-մանովին՝ «ձերդ մեծութեան, չնայած, վոր յես պատկանում եմ այնպիսի մի կուսակցութեան, վորի «սկզբունքները» արգելում են ձեզ նման «ազնվասերունդ» մարդկանց հետ դործ ունե-նալ, բայց յես կարող եմ ձեզ հավատացնել, վոր յես ձեզ չափազանց հարգում եմ»: Այս մասին ասում ե իհարկե վոչ թե մեկ ուրիշը. այլ կե-րենակու բարեկամը:

Այնուհետև նա խորհուրդ չի տալիս «նման պայմաններում», ընդունել գահը: Այլ կերպ մո-տենալու լինենք այդ խորհրդին, կնշանակի հե-տևյալը՝

Նա ուղեցել ե այն ժամանակ իրեն ծա-ուայութեանը մատուցել «նոր ցարին» «թե հիմա վտանգավոր ե մասսան սոցիալիստներին ե ու-գում յես ել զե «սոցիալիստ» եմ հիմա թող մի քիչ կարգի բերեմ այն ժամանակ հեշտ կլինի թագավորելը»: ահա թե ինչ ե ուղեցել ասել պ. «Սոցիալիստ»-ը հեղափոխութեան վճռական մո-մենտին:

Յե՛վ ահա միայն հոկտեմբերն եր, վոր իս-կապես կարգի բերեց: Նաև մի շարք մարդկանց, կերենակու կատեգորիային պատկանող:

Հեղափոխութեան այդ վարկյանին կերենակու մյուս բարեկամները մեզ մոտ Անդրկովկասում, Հոկտեմբերի հաղթանակից հետո կարում են կապը կարմիր Մոսկվայի հետ և կապ հաստա-տում Դենիկինի, Բիչերախովի հետ:

Ահա այսոր մեր տոնի տարեգարձի օրը, վորը մենք տոնում ենք ավելի ամբացած և նոր հաղթանակներով, յերբ վոր մենք անցել ենք և անցնում ենք մինչ պատերազմյան նորմաները, կապիտալիստներն սահմանի մյուս գծում՝ ցան-կանում են մեզ արդեն ծանոթ գայլերին գա-

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՄԻԹՅԱՆ 10-ՐԴ ՏԱ-ՐԵԴԱՐՁԻ ՇՈՒՐՁԸ

Սորհրդային Միութեան աշխատավորներն ամբողջ աշխարհի աշխատավորների հետ միասին ի մի կը գու-մարեն Հոկտեմբերյան Մեծ հեղափոխութեան 10 տար-վա ընթացքում ունեցած արդյունքները:



Ընկ. Ն. Նարխանով

ուսն մորթի հագցնել, և նրանց միջոցով ձեռք բարձրացնել Հոկտեմբերյան նվաճումների դեմ: Բայց վորքան ել ծածկեն գառան մորթով, գայլի ժանիքներից միշտ ել պրոլետարիատը կարող ե ճանաչել իր նախկին գայլին և նրան «կարգի հրավիրել»:

Կարմիր Գանձակը այսոր հանդիպում ե կար-միր 10-ամիակին նոր Ֆարբիկաներով ու գոր-ծարաններով:

Այսոր մենք վոչ միայն վերականգնել ենք այն ինչ վոր քանդել, ավերել եր մուսավաթի կառավարութեանը, այլ և կառուցել և կառուցում ենք նորը, վորի մասին վոչ միայն մտածում, այլ և անընդունակ եր մտածելու Մուսավաթի կառավարութեանը:

Կեցցե պրոլետարիատի հաղթանակի մեծ տոնը:

Կեցցե Լենինյան միացյալ կոմունիստ. կու-սակցութեանը:

Կեցցե կարմիր բանակը:

Կեցցե յերկրագլ զի միակ սոցիալիստական իշխանութեանը:

Կորչի կապիտալիզմը իր բոլոր մանր ու խոշոր լակեյներով:

Կեցցե միջազգային բանվոր դասակարգը և նրա առաջներդ III-րդ ինտերնացիոնալը:



Ընկ. Ա. Մյասնիկյան

Այդ տարը տարվա ընթացքում Սորհրդային Միու-թեան աշխատավորները կատարել են հսկայական աշ-խատանք Սոցիալիստական շինարարութեան բոլոր ֆրոնտներում:

Ինքնակալական Ռուսաստանն անխնա կերպով շահագործում եր ու կեղեքում աշխատավորներին առանց ազգութեան խարութեան: Ցարական սեփիմի ծանրու-թեանը զգում ելին նախկին ուսական կայսրութեան մեջ ապրող աշխատավոր մասսաները: Աշխատավոր-ները չելին վայելում մարդկային իրավունքներ, վորի հետևանքով առաջանում ելին մեծ դժգոհութեաններ, գործադուլներ, հեղափոխական շարժումներ ամբողջ Ռու-սաստանում: Իրրև հիմնական մոմեանտից մեկը կա-րելի յե մասնանշել 1905—6 թվականների գործադու-ման մեջ աշխատավորները պարտութեան կրեցին, սա-կայն դա Հոկտեմբերյան հեղափոխութեան մի նախ-նական քննութեան եր: Ինքնակալական քաղաքակա-նութեանից դժգոհ բանվորական մասսաները վտարի կանգնեցին, վորպեսզի իրանց իրավունքները ձեռք բերին հեղափոխական պայքարի միջոցով: Իշխանու-թեանը կալվածատերերի, խաների, բեկերի և ուրիշ-ների ձեռքում պահելու համար ինքնակալութեանն իր քաղաքականութեան ուղից այժմյան Միութեան անա-

4058-2011

զին տերիտորիայի վրա ապրող առանձին ազգութիւններին միջև ազգային ընդհարումներ հրահրելու կողմը:

Տվյալ ժամանակում այն ժամանակվա ղեկավարներից մեկը—Պետական Դումայի անդամ, այժմ, եմիգրացիայում գտնվող Շուլցինը ասում է, վոր հրեական պոպուլյուլի մեջ անալոգիան ասաջ բերին հրեաների դեմ: Այդպիսի դեպքեր տեղի ունեցան նաև Ռուսաստանի ծայրամասերում—Կովկասում 1905—6 թվականներին կատարվեցին հայ-թուրքական, հայ-վրացական, չեչեն-կաղակային և այլ կոտորածներ: Այդ գործում—ինքնակալական իշխանութիւնը պահելու և

թվականի դասերը ղրդում են Ռուսաստանի աշխատավորներին ուժեղացնել իրանց հեղափոխական գործունեութիւնն ինքնակալական կամակալութիւնից ազատագրվելու գործում, սակայն այդ ժամանակ վրա յե հասնում 1914 թվականի համաշխարհային պատերազմը: Այդ պատերազմին դեմ եր միմիայն բոլշևիկյան կուսակցութիւնը, վորը չեր կամենում զժողովրդացնել ու կործանել բանվորներին, իսկ մնացած՝ սոցիալ-դեմոկրատական և ես-երական՝ կուսակցութիւնները, չնայած միջազգային կոնգրեսի այն վորոշման, թե պետք է ղեկավարել իմպերիալիստական կոտորածին—գալիստանցի կոնգրեսի վճռին և ձայն տվին այն պատերազմի սպառն, վորի նպատակն եր ծառայել իմպերիալիստներին հափշտակել ձգտումներին: Յիվ միջազգային սոցիալ-համաձայնողների հանդես բերին հայրենիքի պաշտպանութիւնը նշանաբանը, վորից յեա չմնացին մեր ուսսական մենշեվիկներն ու ես-երները: Դրանք իմպերիալիստական պատերազմը քաղաքացիականի վերածելու փոխարեն՝ ասաջ քաղցին հայրենիքն ուրիշ պետութիւններին հարձակումից պաշտպանելու նշանաբանները:

Պատերազմի ֆրոնտում գտնվող աշխատավորներն սկզբում բոլորովին պարզ չեյին գիտակցում, թե ինչու յեն պատերազմում ուրիշ յերկրներ ի աշխատա-




Հ. Ս. Խ. Հ. Մ., բանվոր-գյուղացիական ռեօլուքիան ժողովում յեվ Հ. Ս. Կ. Կ. Վ. Կով. նախագահ ընկ. Ս. Ռեզնիկիմն

1905 թվականի հեղափոխական շարժումը ճնշելու նպատակով—փոքր դեր չխաղացին վոչ միայն ուսսական, այլ և Անգրիկովիասի ազգութիւններին բուրժուազիան: Դրա վրա ավելանում է մեր կուսակցութիւնն անբավարար չափով կազմակերպված լինելը:

Մեր կուսակցութիւնն այն ժամանակ չուներ հաստատ ղեկավարումն և ոգնութիւն չեր ստանում մյուս կուսակցութիւններից: Մենշեվիկներն ու ես-երները, վորոնք իրանց անվանում էյին աշխատավորների ներկայացուցիչներ՝ իրապես շարունակում էյին ցարական Ռուսաստանի քաղաքականութիւնը 1905 թվականի շարժման մեջ: Բոլշևիկներին կուսակցութիւնը լենինի անմիջական ղեկավարութիւնը տանում եր աշխատավորներին ղեպի կովի ձիշա ճանապարհը:

1905 թվականից հետո սկսվում են ուժեղ առակցիա և հալածանք բոլշևիկյան կուսակցութիւն և հեղափոխական շարժման լավագույն ներկայացուցիչների դեմ: Դրանց նստացնում են ցարական բանտերում, ուղարկում տաժանական աշխատանքի: 1905



Հ. Ս. Խ. Հ. Միտրյան տեւիսի ժողովրդական կովխար ընկ. Ս. Միկոյան

վորների դեմ: Իսկ յերբ բանակը վերջնականապես համոզվեց, վոր պատերազմի միջոցով պաշտպանում են միմիայն բուրժուական դասակարգի շահերը՝ նրա մեջ սկսեց ուժեղանալ հեղափոխական վոզին և դասակարգային ինքնագիտակցութիւնը: Ներքին սովը Ռուսաստանում, եկոնոմիկայի քայքայումը, գործազրկութիւնը ստեղծում են բանվոր-գյուղացիական լայն մասսաների մեջ ներքին զժողոտութիւնը: Այդ-

պիսով, թիկունքում և ֆրոնտում առաջացած զժողոտութիւնը չեյին կարող չանդրադառնալ ցարական կառավարութիւնն վրա, վորն ավելի ղրաղվում եր կեր ու խումովու արբեցողութիւնը: Այդ գրութիւնն շնորհիվ աշտղեց տապալել ինքնակալ Ռուսաստանը—կատարվեց փետրվարյան հեղափոխութիւնը: Ի նկատի ունենալով, վոր փետրվարյան հեղափոխութիւնն շնորհիվ ուսսական և այժմյան Մեծ Միութիւնն տերիտորիայի վրա բնակվող մյուս ազգութիւններին բուրժուազիան իշխանութիւնն իրենց ձեռքն առան, ուսսական բուրժուազիան համոզվելով, վոր չի կարող իր ձեռքում պահել հեղափոխական—գունավորված նշանաբանների տակ իշխանութիւնը—ստեղծում է մի ժա-



Հ. Ս. Խ. Հ. Մ. Կեհ. Գործկովի յեվ Ադրեշանի ժողովարների նախագահ ընկ. Կ. Մուսաբեկով


մանակավոր կառավարութիւն ևս-երական կուսակցութիւնն ներկայացուցիչները և նրա՝ աշխատավորների առաջին ղավաճան կերենակու պիսավորութիւնը շարունակում է ինքնակալական Ռուսաստանի քաղաքականութիւնը և կերենակին՝ պատերազմն անմիջապես ընդհատելու և աշխատավորների առաջ կանգնած և շտապ վճիռ պահանջող մի շարք անհետաձգելի պրոբլեմներն վճիռու փոխարեն՝ պահանջում եր պրոխտարիտից նոր զոհողութիւններ: Յիվ զա հասկանալի յե, վորովհետե բուրժուազիային ձեռնառ չեր դադարեցնել պատերազմը, թեև ներքեի խավերում ուժեղանալ արտահայտվում էյին զանազան կոմիտեներ ու խորհուրդներ ստեղծելու, պատերազմն ընդհատելու համար:

Ժամանակավոր բուրժուազիան շարունակում եր լուրթյամբ անցնել այդ ցավոտ հարցերի կողքով, իսկ ուսսական բուրժուազիան ձգտում եր աջակցել ժամանակավոր կառավարութիւնն այս կամ այն ձեով: Անցնում եմ 1917—18 թվականներին Անգրիկովկասում ստեղծված գրութիւնը, վորտեղ առաջանում են

այնպիսի զանազան բուրժուական—ազգային կոմիտեներ, վորոնք փաստորեն կերենակու ժամանակավոր բուրժուական կառավարութիւնն ղերեկալիքներ ի կատար ածողներն էյին: Չնայած պատերազմը շարունակելու վերաբերութիւնը արված բարձր հրամաններին, սկսվեց բոլոր ֆրոնտներում բանակի քայքայումը, վորն այլ ևս չեր ճանաչում այդ հրամանները և ամբողջ գնդերով վերադառնում եր հայրենիք:

Իբրև որինակ կարելի յե ասաջ բերել նախկին Գյանջայի մանակալական-հայկական կոմիտեն, վորն աշխատում եր Գյանջայի՝ զանազան պոպուլյուլի ու մյուս անկարգութիւնների աջակցող բեկերի ղեկավարութիւնը: Շատ բնորոշ ու հիշելի յեն Շամքորի Սալմազի ուսուցիչներում տեղի ունեցած անցքերը, յերբ ղինաթափ էյին անում պատերազմել չցանկացող, ֆրոնտից վերադարձող ղինվորներին եշելոնները:

Տեղական բուրժուազիայի վարձած ղինված խումբերը կանգնեցնում էյին ճանապարհին անցնող բանակները, վորպեսզի զրանք չաջակցեն Ռուսաստանի կենտրոնում բռնկված հեղափոխութիւնն, և չաջակցեն Ադրեշանի աշխատավորներին: Մենք ունենք մի շարք պայծառ փաստեր, վորոնք կարող են բնորոշել Գյանջայի գալուտում, Դարբազում, Կուբայում և այլ ուսուցիչներում տեղի ունեցած առանձին անցքերը: Ազգային կոմիտեները չեյին կարող մեծ հաջո-




Ադրեշանի կեհգործկովի նախագահ ընկ. Աղառալի-ողի

ղութիւն ունենալ իրենց անարգ խաղում արդյունաբերական կենտրոն Բագվում ու Թիֆլիսում, վորտեղ բանվորական գասակարգը գիտակցորեն պայքարում եր բուրժուազիայի ամեն տեսակ ինտրիգներին ու չարագործութիւններին դեմ: Այդպիսով աշխատավորները չստացան փետրվարյան հեղափոխութիւնից այն, ինչի սպասում էյին յերկար տարիների ընթացքում և ժամանակավոր կառավարութիւնն ու թամայա գոյութիւնն միջոցին աշխատավորները վերջնականապես համոզվեցին, վոր պետք եր տապալել վոչ միայն ու-

սական ինքնակալութունն, այլ նրա հիտ միասին նաև ուսական բուրժուազիային, ստեղծել պրոլետարական հեղափոխութուն և կոմունիստական կուսակցութեան ու նրա առաջնորդ Լենինի ղեկավարութեամբ լիակատար հնարավորութուն տալ մարդկութեան՝ կեղեքումից ու բռնակալութունից ազատվելու: Հոկտեմբերի 25-ին—ըստ հին տոմարի—աջողվում է տապալել ժամանակավոր կառավարութեանն ու ուսական բուրժուազիան և ստեղծել խակական իշխանութուն աշխատավորների, բանվորների ու գյուղացիների ներկայացուցիչներից:

Հոկտեմբերյան Հեղափոխութունից հետո Բագվում կազմակերպվում է մի խորհուրդ, վորն իր մեծամասնությամբ ընտրվում է բոլշևիկյան կուսակցու-

թյան ներկայացուցիչներից: Բագվի Սորհրդի աշխատանքը բավականաչափ ազդեցութուն չունի Ադրբեջանի շրջակա գյուղերի վրա, վորի պատճառով հետագայում առաջացավ Բագվի կոմունայի անկումը: Բագվի կոմունայի գեմ էյին Ադրբեջանում գոյութուն ունեցող բոլոր ազգայնական կուսակցութունները, սկսած դաշնակներից և ավարտած մուսավաթիստներով, վորոնք ազգայնական բուրժուազիայի գլխավորութեամբ ազխտացիա էյին մղում Բագվի Սորհրդի գեմ, վորը նրանց կարծիքով պաշտպանում էր միմիայն առանձին ազգութունների շահերը: Փլուզումը, վորը և Ադրբեջանի գյուղացիութեան մեջ Բագվի բանվորների գեմ վարվող ազխտացիան սաստիկ ազդեցին և հետագայում բարդացրին Բագվի կոմունայի աշխատանքը:



Գանձակի նոր յուղա-սագունային գործարանը

Վերջապես 18 թվ. շնորհիվ գավաճանութեանն ու իմպերիալիստների գաղանարար միջոցների ընկնում է Բագվի կոմունան:

Մեծ հանցանք է ընկնում այդ գործում մենշևիկների վրա հանձինս նրա ղեկավար Այոլա Սադովալու, եսերների վրա, հանձինս Իվանգուլովի, վորը բացահայտ կերպով աշխատում էր կործանել Բագվի կոմունան և այդ նրանց հաջողվեց, վորի հետևանքով 1918 թվին ընկավ Սորհրդային Իշխանութունը և մենշևիկները ու ես-երների ձեռքով պատժվեցին բոլշևիկյան կուսակցութեան լավագույն ներկայացուցիչ — 26 կոմիսսարները:

Հեղափոխական շարժման քանդվելուց և թյուրքերի ու անգլիացիների արշավանքից հետո Անգրեղովկասի ազգային շարժման տեղական բուրժուական ղեկավարներին աջողվում է վերոհիշյալ իմպերիալիստական յերիկրների աջակցութեամբ՝ հաստատել մոտ 3 տարի ժամանակով ազգային-բուրժուական իշխանու-


թյուն Ադրբեջանում, Հայաստանում ու Վրաստանում: Անգրեղովկասի կառավարութունների գոյութեան ժամանակաշրջանում զանազանել ինքնակալական Ռուսաստանի քաղաքականութունը մուսավաթյան — դաշնակցական — մենշևիկյան կառավարութեան վարած քաղաքականութունից: Բոլոր հին հասանգապետները, ժանգարմներն ու վոստիկաններն աշխատում էյին «գոչիների» ծառաների գլխավորութեամբ՝ արյունալի նիկոլայի հին կարգուկանոնով: Անգրեղովկասի սոցիալ-դավաճանների՝ ժողովուրդները ինքնորոշման, մամուլի ազատութեան և ազգային կուլտուրայի զարգացման վերաբերութեամբ հռչակած նշանաբանները — բոլորն էլ խաբուսիկ բանիւր էյին Անգրեղովկասի աշխատավոր մասսաների համար ընդհանրապես և Ադրբեջանի աշխատավորների համար — մասնավորապես: Ի՞նչ կարողացան արդյոք ստանալ 3 տարվա ընթացքում մուսավաթյան տիրապետութունից Ադրբեջանի աշխատավորները. — բացարձակապես վոչինչ, մինչևեռ

Սորհրդային Միութեան՝ արդյունաբերութեան ազգայնացման, կարվածատերերից հողը խլելու և այլ վերաբերյալ հրատարակած գեկրետներն անց էյն կացվում Ռուսաստանում, այստեղ մեղ մոտ, Ադրբեջանում, նավթային արդյունաբերութունը դեռ ևս մնում էր Բագվի հին արդյունաբերողների ձեռքում և հողն էլ գտնվում էր մոտ 200 բեկերի ու խաների իշխանութեան տակ, վորոնք իրենց ուզածին պես կողոպտում էյին աշխատավոր գյուղացիութեան և ստիպում գրան աշխատել իրանց — բեկերի ու խաների — համար:

Կուսավորութեան հարցերն անմատչելի էյին չքա-

վորների և աշխատավոր բանվորի ու գյուղացու համար և պարոն մուսավաթիստներն ու դաշնակները՝ բնակչութեան այդ խավերի համար դպրոց մտնելու բոլոր ճանապարհները գյուղացնելու փոխարեն՝ զբաղված էյին ուրիշ «չափազանց կարեւոր հարցերով»: Նըբանք հենց այդ չքավորներին գրգռում էյին ազգային խտրականութեան հետեւ և ավելի ևս մթազնում էյին նրանց դասակարգային ինքնագիտակցութունը ու գրավում նրանց ազգամիջյան կոտորած սարքելու կողմը:

Իբրև որինակ՝ մատնանշենք Ղարաբաղում գեներալ-հասնանգապետ Իսարբեկ Սուլթանովի ղեկավարու-



Գանձակի մանուկի գործարանը

թյամբ տեղի ունեցած անցքերը: Այդ մարդն անխնայորեն վոչնչացնում էր աշխատավոր հայերին: Իրա հակառակ յերևույթն էր տեղի ունենում Չանգեղուրում, վորտեղ դաշնակների ղեկավարութեամբ ավերվեցին ու վոչնչացվեցին մի շարք թյուրքական գյուղեր: Նույն յերևույթը տեղի ունեցավ նաև Նախիջևանի շրջանում: Ավերելու և ազգային կոտորածներ սարքելու այդ քաղաքականութեանն աջակցում էր անգլիական ու թյուրքական իմպերիալիզմը 3 տարվա ընթացքում: Անգրեղովկասի աշխատավորներն ապրում էյին ու դիտում ազգային կուսակցութունների այդ անարգ քաղաքականութունն իրանց ազգային պետութուններում և անհամբերութեամբ սպասում էյին գոյութուն ունեցող կամայականութեան վերջ արվելուն: Միմիայն հյուսիսից վրա հասնող հեղափոխական կարմիր բանակի ոգնութեամբ Ադրբեջանի աշխատավորներին աջողվեց ազատվել և մի կողմ շարտել մուսավաթիստների ու դաշնակների վոչնակի լուծը: 1920 թվի ապրիլի 28-ին Ադրբեջանի կոմունիստական կուսակցութեան ղեկավարութեամբ փորվեց մի գերեզման և նրա մեջ թաղվեց ընդմիջ Ադրբեջանի ազգային-բուրժուական իշխանութունը: Այդ որը մի պատմական որ է Ադրբեջանի աշխատավորների համար և Բագվի կոմունայի որով հռչակված հոկտեմբերյան լոզունգները

զարձան աշխատավորների հիմնական լոզունգներ: Իշխանութունն անցնում է Ադրբեջանի չքավոր խավի ձեռքը և Բագվի պրոլետարիատն ազգայնացնում է արդյունաբերութունը, խլում է բեկերից ու խաներից հողը և հանձնում այն չքավորներին և ուժգնապես զարգացնում շինարարութեան ֆրոնտը:

Տեղական ազգութուններին հնարավորութուն է տրվում լուսավորել գյուղացիական յետամնաց մասսաներին՝ սրանց սեփական լեզվով ու սեփական կուլտուրայով: Յեթե մենք այս բոպեխ քննենք մեր անցած ուղին խորհրդային իշխանութեան 10 տարվա ընթացքում, ապա կըտեսնենք, վոր իմպերիալիստական պատերազմից ու քաղաքական ավերածութունից հետո մեր ժողովրդական անտեսութեան, կուլտուրայի գյուղամտեսութեան ու կոտորածից յայտ աճումը, գյուղում չքավոր գյուղատնտեսութեան հասցված ոգնութունը, բանվոր դասակարգի նյութական բարելավումը հսկայական նվաճումներ են ներկայացնում և վոր հենց դրա շնորհիվ մեղ աջողվեց վերակառուցել մեր յերկիրը նոր ձևով, այսինքն յերկրագործականից արդյունաբերականի վերածել: Մեր հակառակորդներն այսպես էյին համոզված, թե մենք չենք կարողանա հաղթահարել այդ անազին աշխատանքը: Յեթե մենք յերկու տարի սրանից առաջ ասում էյինք, թե մենք ար-

դյունարբերութեան ու գյուղատնտեսութեան մեջ հասել ենք մինչպատերազմայանի մակերևույթին, ապա ներկա բոլորիս մենք անցել ենք այդ նորմայից այն կողմը և զարգացնում ենք ուժեղացած թափով մեր ժողովրդական տնտեսութեան բոլոր ճյուղերը:

Յարական Ռուսաստանը հնարավորութեամբ չէր տալիս ծայրամասերի առանձին ազգութեաններին զարգացնելու իրանց սեփական կուլտուրան: Բանվորագյուղատնտեսական իշխանութեան սկսեց զարգացնել կոմմունիստական կուսակցութեան ղեկավարութեամբ՝ ժողովրդական տնտեսութեանը իր Մեծ Միութեան բոլոր յետ ընկած անկյուններում: Իբրև որինակ կարող ենք վերցնել խանական-բեկական վոհմակի նախկին

ոջախ, ազգային խտրութեանները վաղը, 1917-18 թվերին հակա-հեղափոխական ուժերի հենակետ ներկայացող Գանձակ քաղաքը, վորտեղ այժմ աշխատավորների ղեկավարութեամբ որեցոր ուժեղանում և սոցիալիստական շինարարութեանը և դառնում մի նոր արդյունաբերական կենտրոն: Այդ շինարարութեանը հանդես և յեկել վոչ միայն Գյանջա քաղաքում, այլ նաև Անդրկովկասի ուրիշ շատ յետամնաց ուայոններում: Այսոր աշխատավորներն ի մի են գումարում այդ անցած ճանապարհը, վորը մի ավելորդ հարված և հասցնում մեր թե արտաքին և թե ներքին հակա-հեղափոխական ուժերի մեջքին: Ինչպես յերևում է, կարճատես սպիտակ գվարդիական եմիգրանտները չզիտեն



Գանձակի գավառային խորհուրդների VII-րդ համագումարը

այդ ամենը և շարունակում են խորհրդային Միութեան ու սրա աշխատավորների դեմ ուղղած հալածանքը:

Յեզրուպական իմպերիալիզմի այն գործակալները, վորոնց միջոցով Յեզրուպա-ի բուրժուազիան կարծում է իրականացնել իր հակա-հեղափոխական մտադրութեանները՝ ձկան նման սառցին են դիպչում այն միջոցին, յերբ ձգտում են վառել մեր տնտեսական ու քաղաքական ֆրոնտի վորեև անկյունում անաշտութեան հրդեհ ու քանդել մեր սոցիալիստական շինարարութեան նախագծերը: Մատնանշված վասսալները, աշակցութեան գտնելով մեր յերկրում պրոլետարական դիկտատուրայի գծոն տարրերի կողմից, զանազան նախագծեր են ուրվագծում և դրանով կամենում են վոչնչացնել մեր այն անխոնջ աշխատանքը, վորը թափում ենք մեր յերկրի աշխատավորների կյանքը բարելավելու նպատակով: Խորհրդային Միութեան աշխատավորները ներկա ժամանակաշրջանում արդեն բավականաչափ ուսումնասիրած ու վորոշած ունեն այդ ցեցերի դեմքը, վորոնք յերկար տարիներ ընթացքում իշխում էին աշխատավորները վզի վրա և ներկա մոմենտում Միութեան աշխատավորները համոզված ասում են, թե այլ ևս տեղ ու վերադարձ չկա նրանց բոլորի համար, ովքեր ամեն կերպ ձգտում է յին ստրկացնել աշխատավոր մասսաներին: Միութեան աշխատավորների առաջ դրված է դեռ ևս այն անագին խնդիրը, թե վոչ միայն պետք է հաղթահարվեն ներքին դժվարութեանները, այլ նաև պետք է յեվրոպական բանվորի աջակցութեանը ստացվի: Ամբողջ Միութեան աշխատավորները, դիմավորելով այժմ իրանց գոյութեան 11-դ տարուն Լենինյան պողպատե կոմմունիստական կուսակցութեան ղեկավարութեամբ,

ապետ և տասնապատկեն իրանց կենդանի շինարարութեան մեջ, բարելավել կուլտուրան, զարգացնել վորքան հնարավոր է լայնագուն կերպով մեր արդյունաբերութեանն ու գյուղատնտեսութեանը և այս լուսնալուսնով կհանդիպենք Մեծ ազատ շինարարութեան հետեղածին:

Ա. Ասլանով

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈՒՍԻԹՅՈՒՆՆ ՈՒ ԳԱՆՁԱԿԸ

Հոկտեմբերյան մեծ հեղափոխութեանն ազատեց Գանձակի աշխատավորներին անցյալների ծանր լծից: Յարական կառավարութեանը իր հարյուրամյա

իշխանութեան ընթացքում իր զգվելի լպիրը քաղաքաքականութեամբ կաշտում է բեկերին, խաներին ու մեկիքներին և նրանց նմաններին, տալով նրանց գյուղացու բրախնքով պարարտացրած հողը և նրանց միջոցով մնացած գյուղացիական հոծ մասսային դարձնում է միանգամայն գերի և «հլու» իշխանութեան: Միապետութեանը, իհարկե, Գանձակի նահանգը տիրապետելուց հետո «մտածում է» նաև ժողովրդի կըրթութեան մասին, տիրապետութեանից միայն 30 տարի անց բաց և անում 1 զպրոց խաների և բեկերի յերխաների համար այն ել ուսուերին լեզվով, ապա անցնում է ևս 60 տարի և այս անգամ կառավարութեան քաղաքականութեանը «մոտենում է» մասսաներին և բաց և անում ուսու-թուրքական մի զպրոց: Իրա հետ միասին կառավարութեանը չի մոտանում հիմնելու նաև



Գանձակում աշխատող ընկերների մի խումբ. նստած են—1. բնկ. Շ. Եյուրով, 2. բնկ. Հ. Վեզիրով, 3. բնկ. Ս. Ղազարյան, 4. բնկ. Ա. Ասլանով, 5. բնկ. Ա. Մամեդով, 6. բնկ. Ս. Տոնյան. կանգնած են—1. բնկ. Բ. Բագիրով յեվ 2. բնկ. Մ. Ջավադիևսկի

մուսուլման հոգևորական իշխանութեան և այն ել «սյունիքի» և «շիա» առանձին-առանձին, վորպեսզի կարողանա վոչ թե տարբեր ազգութեանների մեջ խտրութեան, այլ և միևնույն ազգութեանը բաժանել յերկու մասի:

Այս «տեմպով» ընթանում է ցարական կառավարութեան քաղաքականութեանը սկսած 1813 թվականից մինչև 1917 թ. փետրվարյան հեղափոխութեանը:

Գանձակի պատմութեանն այդ 100-ամյակի ընթացքում ունի շատ տխրահուշակ մանրամասնութեան. այն ժամանակ, յերբ վոր խաները, բեգերն ու մեկիքները խնձույքի էին նստում, այդ ժամանակ հայ և թուրք աշխատավոր ժողովուրդները կոտորում և վոչնչացնում էին միմյանց...

Վերջապես գալիս է փետրվարյանը հեղափոխութեանը, տապալվում է ցարը և առաջին հայացքից թվում է, թե վերջանում է աշխատավորութեան դարավոր տանջանքները: Բայց ավսղ. նա ավելի ուժեղանում է, վորովհետե մի ցարի փոխարեն առաջ են գալիս մի շարք ցարեր. նորից տիրում է ազգային կոտորածները, նորից թալանն ու վախն և տիրում,

նորից բանդիտիզմ սկսած մուսուլմանական կառավարութեանից մինչև զոչին: Այդ բանդիտական խոշոր քայլերից են Շամխորի և Գալլարի գեպերը, յերբ բանդիտական կառավարութեանը գրնաթափ և սրախողոց է անում ֆրոնտից տուն վերադարձող հազարավոր զինվորներին: Այսոր ազատագրված աշխատավորութեանը չի կարող մոռանալ նաև Գանձակի ապստամբութեանը, վորը խլում է նրա շարքերից հազարավոր կյանքեր:

Այս գեպերը անջնջելի կերպով ծանրանում են Գանձակի բեկերի, խաների և բուրժուազիայի վրա:

Սաները, բեկերն ու ազալարները տաճիկների ոգնութեամբ կազմակերպում են իրենց ազգային խորհուրդը, վորի գլուխն են տնցնում Սան-Սոյսկին, Բաֆիրեկոջները, Սասամեղովները, Շախամիկները և այլ հակահեղափոխական ելեմենտները: Այդպիսի իշխանութեանից բանվորների և գյուղացիների դրուցոր վաթաթարանում է, մանավանդ հայ աշխատավորների դրութեանը, վորոնք յենթարկվում են անընդհատ թալանի, կոտորածի և անարգանքի:

Իհարկե, աշխատավորութիւնը յեւք ե փնտռում այս դրութիւնից յեւելու համար. այդ յեւքը լինում ե Ադրբեջանի խորհրդայնացումը 1920 թվականին:


Սորհրդայնացումից մինչև որս անցել ե 7 տարի, վորի ընթացքում Գանձակն իր արդյունաբերութիւնը Անդրկովկասում բռնում ե 4-րդ տեղը, իսկ Ադրբեջանում 2-րդ տեղը: Սորհրդային իշխանութեան ձեռքբերով են ստեղծված ե վերանորոգված մի շարք նոր ձեռնարկութիւններ, ինչպես, որինակ, մահուդի ե չիթի ֆաբրիկաները, յուզի ե սապին գործարանները, Զուրնարաղի ելեքտրոկայանը ե այլն, ե այլն...

Ադրբեջանի խորհրդայնացումից հետո Գանձակում 1923 թ. կառուցվում ե 1-ին մահուդի ֆաբրի-

կան, վորտեղ աշխատում են 285 բանվորներ, վորոնցից 88-ը կանայք են: Ֆաբրիկան արտադրում ե ամսական մոտ 21,000 մետր գործվածք: Ֆուրա-սապոնային գործարանում աշխատում են 365 բանվոր: Գործարանը մինչև այժմ արտադրել ե 4,261,791 կիլոգր. յուղ 1.642.920 ուրլի արժողութիւնը, 407.255 կգր. լինտեր 106.518 ու. արժողութիւնը, 10.727.945 կգրմ. ժմիխ 360.244 ու. արժողութիւնը ե այլն:

Բացի դրանից, Հոկտեմբերյան հեղափոխութեան 10-րդ տարեդարձին, բացվում ե գործվածքային ֆաբրիկա, վորում ապագայում պիտի աշխատեն 9000 բանվոր:

Այժմ նույնպես արագ թափով ընթանում ե Զուր-



Գանձակի դեպոյի յերիսասարդ բանվորների ձեռքով նոր հիմնովին վերանորոգման յեկրարկված շոգեմեխան, նվեր Հոկտեմբերյան Հեղափոխութեան 10-րդ տարեդարձին

նարաղի ելեքտրոկայանի աշխատանքները, վորտեղ աշխատում են 700 հոգի: Այդ կայարանը պատրաստ կլինի Ադրբեջանի խորհրդայնացման 8-րդ տարեդարձին ե կոտ 3000-ից ավելի ձիու ույժ:

Գեկտեմբերի 1-ին արդեն պատրաստ կլինի բամբակի նոր գործարանը, վորը կմշակի Գանձակի գավառի ամբողջ բամբակը:

Վերանորոգվել ե բամբակի 5 գործարան ե կառուցվել սելեկցիոն կայարան 500.000 արժողութիւնը, վորտեղ աշխատում են 18 ագրոնոմներ: Կառուցվել ե կահավորվել ե նաև (оборудована) քաղաքային ելեքտրոկայարանը:

Անցնելով լեռնային արդյունաբերութեանը, պետք ե ասել, վոր Միութենական Գերագույն Տնտեսական Սորհրդի (ВСНХ) ջանքերով արդեն վերջանում ե Իաշ-քյասանի հետազոտական աշխատանքները, վորտեղ կա նախնական հաշվով մոտ մի քանի միլիարդ փութ

հանք (յերկաթ): Այդ հանքը ոգտագործելու համար կկառուցվի գործարան Գանձակում ե հանքերում ու գործարանում միասին կաշխատեն մոտ 11.000 բանվորներ:

Զրգահնձորի կալչեղանի հանքերը ավելի ուսցիտնալ մշակելու համար բաց ե թողնվել անհրաժեշտ գումար՝ հանքերը կարգի բերելու ե յերկաթուղի անցկացնելու համար: Բացի դրանից կարգի յեն բերվել շիթի զավոդը ե Բարիտի հանքերը:

Այնուհետև գալիս են Գետաբեկի պղնձահանքերը: Զնայած այդ հանքերն ունեն հարուստ պատմութիւն, վորտեղ մինչ-պատերազմն աշխատել են 5000 բանվոր, բայց պատերազմի ընթացքում նա քայքայվում ե ե հանքերում աշխատանքը բոլորովին դադարում, որովհետև վոչ մի հետազոտում չի կատարվում ե հայտնի յեղած հանքերի բոլոր յերակները (ЖИЛЫ) սապառվում են:

Բայց այժմ Ժ. Տ. Գ. Ն. (ВСНХ) ձեռք առած միջոցների շնորհիվ բաց ե թողվել 97.000 ու. հետախուզական աշխատանքներ տանելու համար: Այդ աշխատանքներն արդեն ստակվում են հաջողութիւնը ե 3 տեղ գտնվել են հանքերի նոր յերակներ 8—15 կիլոմետր տարածութիւնը:

Յեւ վերջապես բաց ե թողնված 250.000 ուրլի Նավթայան կոչված տեղում քիմիական գործարան հիմնելու համար, վորը պատրաստ կլինի Ադրբեջանի խորհրդայնացման 8-րդ տարեդարձին:

Բաց ե թողնված 90.000 ու. մեխանիքական գործարան հիմնելու ե 174.000 ու. սառցարան հիմնելու համար:

Արդեն աշխատանքներ են տարվում Ղարասախկալում հիմնելու նոր ելեքտրոկայարան 60.000 ձիու ույժով ե Գանձակում կառուցելու ես մի նոր մանվածքային գործարան:

Անա թե ինչ ե տվել մեզ Հոկտեմբերյալ Հեղափոխութիւնը:

Վեգիլով



Գալ. գործ. նախ. սեղակալ՝ ընկ. Ս. Տոնյան

ԳԱՆՁԱԿԻ ՊՐՈՖԵՍՐՈՐՆԵՐ ԶՈՎՏ. 10-ՐԴ ԱՄՅԱԿԻՆ

Գանձակում բացի յերկաթուղու բանվ. միութ. միջուկ միութիւններն իրենց սկիզբն առնում են 1917 թվի սկզբներից:

Առաջին անգամ կազմվել են բժշկա-սանիտարական ե հող-անտառային միութիւնները, ցեխային սկզբունքներով:

Ամեն մի միութ. բաժանվում եր մի քանի առան-

ձին-առանձին մասերի, վորոնք համարյա իրար հետ կապ չունենին: Սա ցույց ե տալիս, վոր այն ժամանակ (մուսավաթի որոք) փաստորեն վոչ մի կուլտուր-կրթական աշխատանք չեր գնում:

Մնացած պրոֆմիութիւնները կազմակերպվում են 1920 թվից որ. կառուցողների միութ., տեքստիլ-



Ըճկ. Մամեդով—Գանձակի դեպոյի բանվոր յեւլ Համ. Կեւիս. Գործ. Կամիսեի անդամ

չիկների, կոմմունալ աշխատավորների, խորհրդ. ծառայողների ե այլն. դրանից մի քանիսն առաջ են գալիս մինչև խորհրդայնացումը:

Ադրբեջ. խորհրդ. հետո միութիւնները վերափոխվում են ե վերացվում են աննորմալութիւնները, ինչպես որ. մինչև 20 թվ. հող-անտառ. միութիւնը մտնում եր խորհրդ. ծառ. միութ. մեջ: 21 թվ. այդ միութիւնն ուներ մինչև 700 անդամ Ղազախի ե Շամխորի գավառներով միասին, իսկ Գանձակում կար միայն 283 անդ.: Բայց այդ թիվը մինչև 1925 թվ. հասնում ե 5,000-ի, իսկ այժմս 6,000 ավելի, վորովհետև շնորհիվ կազմակերպչական աշխատանքի, հնարավոր յեղով ընդգրկել համարյա թե ամբողջ բաւրակութիւնը:

Այնուհետև կառուցողների միութ., վորը 1920 թվ. ուներ միայն մի բանվ. կոմ. ե 150 բանվորն. (այդ միութ. մեջ ե յին մտնում արհեստավորներն ես, բայց ապագայում նրանք բաժանվում են ե կազմում են առանձին միութ.) 1922—23 թվ. 327 անդ., 24—25 թվ. 693 անդ., 26 թ. 1,500 անդ., իսկ այժմս մոտ 2,660 անդ.: Իհարկե միութ. աճումը բացատրվում ե շինարարական աշխատանքների աճումով, Գանձակի գավ. որ. չիթի ֆաբրիկան, մահուդի ֆաբ., Զուրնարաղի ելեքտրոկայան, Ղարասախկալայի ջրանցքը ե այլն, ե այլն...

Մեծ աջողութիւնով աճել ե նաև պիչնիկների միութիւնը, վորը 1920 թ. ուներ 50 անդամ, իսկ

այսոր, շնորհիվ յուզա-սապոնային գործարանի և ուրիշ ձեռնարկութիւններէ միութեանն ունի մոտ 1,000 անդամ:

Ընդհանուր ամամբ Գանձակի արդյունաբերութեան հետ միասին զարգանում են պրոֆմիութեաներ 1917 թվ. 2 միութեանից 25 թ. հասնում է 17-ի, իսկ այսոր արդեն 19-ի: Նոր կազմված միութեաններէ կ'անքափորներէ միութեանը, վորն ունի մեծ ապագա ի նկատի ունենալով Դաշքեասանի և Կեղարեկի հանքերի մշակութեան հարցը, վորոնց մշակելու համար յետանդուն աշխատանք է տարվում:

Միութեաններէ գալ. բաժանմունքների ձևակերպման հետ միասին կազմակերպվում է նաև պրոֆեսիոնալ միութեանների գալբյուրոն:

Գալ. բյուրոն 1924 թ. միացնում էր ընդամենը 10,000 պրոֆմիութ. անդամ, 25 թվին հասնում է 14,000 անդ., 26 թ. 18,000-ի, իսկ այսոր, մեծ հորելյանի որը Գանձակի գալ. պրոֆմիութեաններն իրենց շարքերում հաշվում են 20,000-ից ավելի անդամներ:

Այդ թիվն առանձին միութեանների վրա բաժանվում է հետևյալ կերպով.

1. Յերկաթուղ. բանվ. միութ.	4,246	անդ.	40	տեղկոմ
2. Հող-անասն.	6,000	»	46	»
3. Կառուցողների	2,650	»	11	»
4. Սորհրդ. ծառ.	1,438	»	33	»
5. Գործողների	705	»	4	»
6. Բժշկա-սանիտ.	731	»	16	»
7. Հանքափորների	500	»	5	»
8. «Պիշկեիկներ»	800	»	5	»
9. Լուսավ. աշխատ.	1,090	»	49	»
10. Կոմմունալիստների	365	»	6	»
11. Կարողների	182	»	1	»
12. «Նարպիտ»	400	»	6	»
13. Կաշվեգործների	176	»	4	»
14. Մետաղագործների	140	»	3	»
15. «Տարբիս»	107	»	5	»
16. Ժող. կապի	117	»	3	»
17. Ատաղծագործների	97	»	4	»

18. Տեղ. արանսպորտ	»	230	»	3	»
19. Տպագրիչների	»	16	»	1	»


Գանձակի հետ միասին աճում է նաև պրոֆեսիոնալ ակադիլը. այսպես որինակ, միութեաններին կից ընտրված է մինչև 800 կոմիտեաներ, վորտեղ առաջ են քաշված մոտ 3,000 մարդ:

Բացի դրանից յեթե 20—21 թ. վոչ մի կուլտուրական անկյուն չկար, այսոր մենք ունենք 6—7 բանվորակ. կլուբներ, մոտ 100 կարմիր անկյուններ իրենց պատի թերթերով:



Ընկ. Ա. Ա. Գեյգալի—Գանձակի դեպուի բանվոր, Ա. Կեմեր. Գործ. Կամ. անդամ

Պրոֆմիութեաններէ այս աճման մեջ մեծ ուշադրութեան է գրավում նաև կանանց աճումը 20 թ. նրանց թիվը «մի քանի տասնյակի յեր հասնում, իսկ այսոր նրանց թիվը հասնում է 2,500-ի. աճել է նաև կանանց ակադիլը, վորոնք մասնակցում են բոլոր ընտրովի որգաններում:



Գանձակի սելեկցիոն (селекцион) կայանը

Գանձակի պրոֆմիութեաններէ համար բնորոշն այն է, վոր նրանք շատ յերիտասարդ են և անցյալի հեղափոխական, և շահագործման դեմ պայքարելու փորձ չունեն:

Այս հանգամանքը պարտավորեցնում է խորացնել մասսայական աշխատանքը, վորպեսզի նրանք յուրացնեն հեղափոխական այն փորձը, վորն ունեն մեր միութ. կենտրոնական քաղաքների պրոֆմիութեանները:

Այժմս մի քանի խոսք աշխատավարձի մասին: Իհարկե խորհրդային իշխանութեան ամբապնդման և արդյունաբերութեան զարգացման հետ միասին չի կարող չաճել նաև աշխատավարձը:

Այսպես որինակ, յեթե մեզ մոտ 1924 թ. միջին աշխատավարձը բանվորների հասնում էր 40—45 ուրբ., այժմս բարձրացել է այդ թիվը և հասնում է մինչև 58 ուրբ., իսկ կվալիֆիկացիայի յենթարկված


մանավանդ կառուցողների միջին աշխատավարձը հասնում է 100—150 ուրբ.:

Աշխատավարձի բարձրացման հետ միասին, բարձրացել է արտադրական խորհուրդների (производст. совещ.) աշխատանքը:

Ահա սա յե Գանձակի գալառի պրոֆեսիոնալ շարժման կարճ նկարագրութեանը, վորտեղ մի քանի թվերից յերևում է, թե ինչպիսի հսկա քայլերով է զարգանում պրոֆշարժումը, սա իհարկե մի հաղթանակ է Գանձակի աշխատավորութեան համար, վորը պայմանավորվում է Հոկտեմբերյան հաղթանակով:

Այսոր տոնելով Հոկտեմբ. հեղ. 10-րդ տարեդարձը, անհրաժեշտ է կրկնապատկել աշխատանքը, վորպեսզի ավելի ևս ամբապնդենք Հոկտեմբերյան նվաճումները և անհողողը քայլերով զարկ տանք սոցիալիստական շինարարութեանը:

Ա. Բեյուբեկով



Գանձակի նոր կառուցվող բամբակի գործարանը

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԾԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԱՆՁԱԿՈՒՄ

Նախ քան Գանձակի գալառում խորհրդների աշխատանքների մասին խոսելը անհրաժեշտ է քիչ կանգառնել մինչ խորհրդայնացումը այդ գալառի վարչական բաժանման և կառավարելու մասին, այն է 1917 և 20 թվականների ընթացքում:

1917 թ. գալառը բաժանվում էր 6 վոստիկանական մասի, վորտեղ բոլոր վարչական գործերը կատարվում էին գյուղական վարչութեանները և նրա գլուխ կանգնած տանուտերները:

Մեծաքանակ գոյութեան ուներ 6 պոլիցիական բաժանմունք, վորի գլուխ կանգնած էին հաշտարար միջնորդները վորոնց ֆունկցիայի մեջ էր մանում գյուղացիների և կալվածատերերի հողային հարցերի լուծումը:

Դատական գործերը վարում էին գյուղական զազավորները, վորոնք իրավունք ունեին վճռել քաղաքային գործեր մինչև 50 ո. իսկ քրեական՝ 30 ո. և գալառի հաշտարար գատավորը:

Այսպիսի վարչական բաժանմունք և վարչութեան գոյութեան ուներ մինչև 1917 թ. հոկտեմբերը վորից հետո: Ամբողջ իշխանութեանն անցավ, այսպես կոչվաց, «ազգային խորհրդներին», (հայերի և թյուրքերի):

Տաճիկների գալով և մուսավաթիստական կառավարութեանը կազմվելով գալառի վարչական ձևը այսպես ասած վերածնման յենթարկվեց—կրկին վերահաստատվեցին պրիստապիների և տանուտերների պաշտոնները: Սակայն գալառի կառավարութեան գործում ղեկավար դերը խաղում էին դարձյալ «ազգային խորհրդները», պահպանելով դիտավորյալ կերպով թշնամութեան յերկու յեղբայրակից սպգութեան հայի և թյուրքի մեջ:

Այսպես շարունակվեց մինչև 1920 թ. յերբ Ադրբեյջանի աշխատավորներն իրանց կարող գորութեամբ և Բազվի պրոլետարիատի ղեկավարութեամբ սրբեցին ցարի փառած ուժիմի բոլոր հին մնացորդներին և մուսավաթին: Իշխանութեանն անցավ աշխատավորներին հանձինս հեղափոխական կոմիտեաների: Գանձակում

կազմվեց շրջանային հեղկում և գավհեղկում ու սրան, կից արտակարգ հանձնաժողով:


Այս որոշումներն ել կազմում ելին ամբողջական իշխանութիւնը: Հեղափոխութեան խորացման անհրաժեշտութիւնը առաջ բերեց իշխանութեան հետեյալ ձևը- չքավորների կոմիտեաներ, և վերջապես 1922 թ. մենք անցանք ամենակատարյալ և վերջնական ձևին- գյուղխորհրդներին և գործկոմերին:

Այն ժամանակ ունեյինք 4-ը գործկոմ (Գալմամիզլի, Սամուխի, Կասում Իզմայիլովսկի և լեռնային), իսկ գյուղխորհուրդ-31: Կառավարչական ապարատն այն ձևով շարունակվեց մինչև 1925 թ., յերբ Սորհրդային ապարատի ժողովրդին մոտեցնելու խնդիրը որակարգի հարց և դառնում:

Յեն 4 գործկոմի փոխարեն կազմում է 8 դայիրա-գործկոմ, իսկ խորհրդների թիվը հասավ մինչև 76):

1926 թ. դայիրագործկոմի թիվը հասավ 9-ի վորոնք են Սամուխի, 2) Չայկենդի 3) Ելենենգորֆի 4) Գալմամիզլի 5) Դաստաֆուրսկի 6) Նարեգայինսկի 7) Աղջաբենդի 8) Բանանցի և 9) Կասում Իզմայիլովսկի: Յետոյ թիվին ել Շամխորի գավառի վերացումով Գանձակի վրա ավելացավ 3 Դայիրա-Գետարիկի, Սլավյանսկի և Շամքորի: Ներկայումս կառավարչական ստորին ապարատներն են 12 դայիրագործկոմ և 102 գյուղխորհուրդ:

Փշրելով ցարական հին կարգերի ապարատ-մեքենան և հետո յեկ մուսավաթիստականը, Ազրբեյջանի աշխատավորութիւնը ձեռնարկեց ստեղծելու իր սեփական



Ելենգորֆի մոտ նոր կառուցվող անասնա-տեխնիկական կայանը (300-техническая станция)

գործունի ապարատը վորովհետև կյանքն ինքն եր պահանջում խորհրդների աշխատանքի նոր ձևերի և այսպես գյուղ խորհուրդն ու Դայիրագործկոմը գառնում և գյուղի կուլտուրական և տնտեսական ոջախը:

Սորհրդների ստորին ապարատը ներկայումս ապրում է իր գործունեութեան և մասսաների մեջ խորացման կազմակերպչական ձևավորման շրջանը, գրավելով աշխատավոր լայն մասսաներ և ամբացնելով խորհրդների կողքին չունեող-միջակների բլոկը:

Այդ ասպարեզում մենք ունենք մի շարք նվաճումներ այսպես 1926 թ. 76 գյուղխորհուրդ ունեք 2779 ընտրվածների կազմ, այժմ ունենք 102 գյուղխորհում 4040 մարդ: Անցյալ տարի գյուղխորհրդի մեջ մտցրվել է 311 կին, իսկ այս տարի հասել է մինչև 610-ի: Ըստ կուսակցութեան անցյալում ունեյինք 10% կուսակց, և 6% կոմյերիտ, այժմ ունենք 12% կուսակց, և 10% կոմյերիտ: Ըստ սոցիալական կազմի ունեյինք 50 բանվոր, արհեստավոր և ծառայող 235 և հողագործ՝ 2412, իսկ այժմ ունենք բանվոր 105, արհեստավոր և ծառայող 515, և հողագործ 3360: Անցյալ անգրագիտութիւնը խորգրդներում և դայիրաներում

հասնում էր մինչև 80% -ի, այժմ այդ թիվն իջել է մինչև 50%:

Ազգային փոքրամասնութիւններն ել են գործի մեջ քաշված և նրանց շահերն ապահովելու համար ստեղծված են տերիտորյալ վարչական միութիւններ ըստ ազգայնական ընտրուման: Այսպես, 12 դայիրագործկոմից 7 թյուրքական է, և 5 հայկական գյուղխորհուրդ թյուրքական՝ 69, հայկական 28, գերմանական՝ 4 և ուսաց՝ 2: Ըստ ազգային կազմի-թյուրք 2692 (66%), հայ՝ 1147 (28%), գերմանացի 96, ուսա՝ 96 և ուրիշ (6%):

Սորհրդների աշխատանքները գավառում ամեն տարի դեպի լաֆն են գնում:

Ճիշտ է Սորհուրենները քիչ գանդազ, բայց և այնպես նրանք դառնում են իսկապես այն կուլտուր-տնտեսական կենտրոնները, վորոնք իսկապես պետք է վերածեն գյուղը և ծառային մասսաներին դեպի շինարարական գործի քաշելուն:


Ներքև բերած համառոտ աղյուսակը կարող է հաստատել Սորհրդների գործունեութիւնը:

Սորհրդների նիստերի թիվը	Գյուղխորհրդ. նայած գործերի թիվը	Դայիրա գործկոմի նայած գործ. թիվը
1925 թ. 652	2347	566
1927 թ. 1051	1259	1145

Սորհուրդների լուրջ աշխատանքներից պետք է անպայման համարել դայիրագործկոմների աշխատանքների ձևավորման և կանոնավորման խնդիրները: Ճիշտ է, խորհրդների աշխատանքներն ևս պետք է կանոնավորվեն, սակայն դրա վրա ստորին ծառայողների կողմից կարևոր ուշադրութիւն չի դարձվել, այդ պատճառով ել խորհրդների աշխատանքների կանոնավորումը դեռ ևս ցանկալի եֆֆեկտներ չի տվել: Բայց դայիրագործկոմում մենք ունեցել ենք մի քանի գրական կողմեր, հարցերի անհատական լուծմանը փոխարինեց կուլեկտիվ խորհրդածութիւնը, վոր շարաթա-

կան մի անգամ լինում եր պրեզիդիումի նիստում, և ամիսը մի անգամ դայիրայի պլենումում: Աշխատանքների այսպիսի որինականացումը պետք է բարենաջող կերպով ազդեր շինարարական բոլոր ճյուղերի գործնական աշխատանքների վրա:

Այսպես մեր կուսակցութեան և Սորհրդային իշխանութեան դերեկտիվները համաձայն խորհրդների աշխատանքը կենդանանում է գյուղերում: Սորհրդների մասսայական ուժեղ աշխատանք, վոր կատարվելու յի սեկցիաների ժողովների և դայիրաների հանձնաժողովների ոգտագործելու ուղղով, պետք է գյուղացիական լայն մասսաներին և գյուղիկտեխնիկային գերազանց չափով քաշել խորհրդների գործնական աշխատանքների մեջ, ամբացնել չունեող-միջակների բլոկը ապագայում, և ստեղծել Սորհրդների կազմի մեջ հենց դրանցից ակտիվներ, կանոնավորել խորհրդների աշ-



Գանձակում կառուցված նոր բանվորական սենք

խատանքները, դայիրա գործկոմը դարձնել իսկական կուլտուր-տնտեսական ոջախ, վոր իր տերիտորիայի սահմաններում պետք է ընդգրկի իր մեջ բոլոր կազմակերպութիւններն ու հիմնարկութիւնները, դայիրաների իրանց բյուջեները լիակատար ու կանոնավոր ոգտագործելը և վերջապես, ստորին միավոր-գյուղխորհրդի գործունեութեան վրա աուրյա կենդանի դեկավարութիւն ունենա:

Անա այս և մոսավորապես մեր նվաճումներն ու խնդիրներ խորհրդային ժնարաուրյան ասպարեզում մեր գալատում, Հոկտեմբերյան հեղափոխության ասուլակիին:

Ն. Ս.

II-ԲԴ ՏԵՐԻՏՈՐԻԱԼ ԳՈՒՆԴԻ ԱՆՑԻԱԼԻՑ

Մեր գունդն իր սկիզբն առել է Ազրբեյջանի բանվորա-գյուղացիական գնդից, վորը կազմվել է Բագվում 1920 թ. մայիս ամսում:

Գանձակի հակահեղափոխական ապստամբութեան ժամանակ մեր գունդը փոխարկվեց Մոսկովյան զորանոցները, վորոնք գտնվում են Սարունջի, Սուբախանի

նավթահանքերի շրջանում: Այդ տեղափոխութեան նըպատակն այն եր, վորպեսզի տեղն ու տեղը ձնշեր այն հակահեղափոխական փորձերը, վորոնք կարող ելին ծագել Ափշերոյան թերակղզում կուլակների և բուրժուական տարրերի մեջ Գանձակի ապստամբութեան ժամանակ:


Այդ ժամանակ Բագվի բուրժուազիան կազմակերպում է Ասլանի հակահեղափոխականի շայկան, վորի նպատակն եր վոջնչացնել այդ գյուղերում բոլոր կոմունիստներին և խանգարել բանվոր-գյուղացիներին վերականգնելու իրենց տիրապիտութիւնը:

Հենց այդ ժամանակ բանվորա-գյուղացիական II-րդ գնդի շարքերը լրացվում էլին պրոլետար և չըքավոր գյուղացու կազմակերպով: Կարմիր բանակայինները, Շնորհիվ իրանց պարտքի ամուր գիտակցութեան՝ զինային խիստ հարված հասցրին Ասլանի շայկին և Բագվի վողջ բուրժուազիային:

1920 թ., կարծեմ, հուլիսին, Ազրբեյջանի դեռահաս ջոկատներն ու գնդերը արձագանք տվին պարսիկ ձնշված ժողովրդի կոչին, ի թիվս վորոնց և Ազրբեյջանի II հրաձգային գունդը:

Առաջինը մեր գունդը բերնավորվեց նավերի և բարձանների վրա և յերեք օրից հետո մեծ հրճամանքով բեռնաթափ յեղանք ենդելու նավահանգստում և Սարոկին, Չուրակինի ատրիադների հետ միասին կովի բռնվեցինք Դենիկինի սպայական գնդերի, անգլիական բաաալիոնների, շահսովանների բանդաների, քրդերի և պարսից շահի կողակալին գնդերի հետ: Ծնորճիվ XI բանակի կարմիր ջոկատները կասպ-Ֆլոտի, Ազրբ. զորքանակի ուժեղ և յեռանդուն գործունեյության պարսիկ ազգաբնակչության ամենաչքավոր խավերի ոգնությամբ հաջողվեց խորհրդայնացնել Ռեշտի և ենդելու նահանգները:

Ութ ամսից հետո գունդը վերադարձավ Բագու:



Ղարաապխալի ցրանցիք (վերելում յերեկում և եխակաւսոր

Ազրբեջանի պրոլետարիատի և չքավոր գյուղացիության շահերը պաշտպանելու ներքին հակահեղափոխությունից: 1920 — 1921 թ. թ. Ա. Ս. Ս. Լ. բոլոր գավառական քաղաքներում կազմակերպվեցին պատժիչ գնդեր և Ն. Ժող. Գում. հրամանի համաձայն Պարսկաստանի ֆրոնտից նոր յեկած բանվոր-գյուղացիական 2-րդ գունդը պետք է մտնէր Ազրբ. ղեկիղխայի կազմի մեջ Բ. Կ. Մ. Ս. և այդ նույն հրամանով էլ պետք է կազմավորեմիջին բոլոր պատիժ բաաալիոնները և ձուլվեյին Ազրբ. ղեկիղխայի Բ. Կ. Մ. Ս. կազմի մեջ:

Բանվոր-գյուղացիական գնդի վերակազմությունը տեղի ունեցավ Նուխի քաղաքում, և 1921 թ.,

հունիսին, գունդը վերջնականապես վերակազմվեց և կոչվեց II գունդ Բ. Կ. Մ. Ս. Ազրբեյվիզի:

Թե Նուխու, թե Ազրբայի և թե Զաքաթալի գավառներում սակավ անգամ չէ ցույց տվել գունդը, վոր նա պրոլետարիատի հավատարիմ զինյալ ջոկատն է: Գնդին առաջարկված էր վոչնչացնել 3 գավառում բուն զրած բանդաներին: Այս պարտականությունը պատվով է կատար անեց գունդը:

Այս փոքրիկ բանդաների հետ գործը վերջացնելուց հետո՝ յերևան յեկավ տաճիկ չովուշ (ուշուխ ո-ֆիցեր) Հյուսիսային Եֆենդու ավելի խոշոր և կազմակերպված շայկան: Այս բանդան ամբողջապես հենվում էր տեղական բուրժուազիայի և կուլակների վրա, այդ բանդայի կազմի մեջ մտնում էր 120 ձիավոր:

Հյուսիսային Եֆենդին այդ գավառում մանր բուրժուականներից կազմեց բավականին մեծ և հակահեղափոխական ահտիվ «Իթթիաթ» կուսակցություն, վորի կազմի մեջ մտնում էին գյուղերի, Նուխու և Ազրբայի խոշոր կապիտալիստները և քաղաքի զոչիները, թվով մոտ 600 մարդ:

Մեր գնդին նույնպես հաջողվեց Նուխու քաղաքային հետ միասին վերջ տալ այդ բանդային ևս իր

«Իթթիաթ» քաղաքական կուսակցության հետ միասին, իսկ Հյուսիսային Եֆենդիին բռնեցին մեր մարտիկները և հանձնեցին պրոլետարական արտակարգ հանձնաժողովի գառաստանին:

Մեր գնդի ոգնությամբ, չունեորների ձեռքով վերջնականապես թաղվեց հակահեղափոխական «Իթթիաթ» կուսակցությունը:

1921 թ. նոյեմբերի 15-ին գունդը գալիս է Գանձակ և վերջնականապես վերակազմվելով ստացավ Ազրբեջանի ղեկիղխայի II գունդ անունը:

Ազրբեջանի II գունդը լրիվ կազմով Գանձակում էր, մինչև 1921 թ., վորից հետո սկսվում է գնդի անտեսական և կենցաղային պայմանները լավանալ:

Կարմիր բանակայինի հացի բաժինը մեկ գրվանքայից գառնում է 2 գրվանքա, զրա հետ միասին սկսվում է բարելավվելու գնդի գրությունը:

Գունդն իր հաջողած վարժողությունների շնորհիվ ստացավ կուրսանսակի գունդ՝ Փողկոմխորհի անվամբ կոչումը, հետո կոչվեց Ազրբեյվազի վարժական գունդ:

1922 թ. մի քանի հրամանատարներ բուրժուական ընտանիքներից, փորձում են ստնգծել գնդում

հակահեղափոխական «Իթթիաթ» կուսակցությունը, վորը հենց նույն կարմիր բանակայինների ձեռքով 1921 թ. ջախջախվել էր Ազրբայի գավառում: Սակայն այդ կազմակերպությունն ևս շուտով ցրեցինք, վորից հետո գունդը վերջնականապես ազատվեց մուսավաթական թափփուկներից և կասկածելի քավող տարրերից. վորից հետո մեծ զարկ տրվեց կարմիր բանակայինի ինքնագիտակցության բարձրացման և գնդի սազմունակությանը:

1923 թ. սկսվում են Բյուրեղամիր-Գյոլկաչի հակահեղափոխական ապստամբությունները: վորտեղ այդ ապստամբությունները ձնչելու մեջ սկստիվ մասնակցություն և ցույց տալիս և մեր գոնդը:

1924 թ. II հիմնական (кадровый) գունդը անցնում է տերրիտորիական սխտեմի և շնորհիվ հրամա-

նատարական կազմի ուժեղ աշատանքի հաջողվեց անցկացնել 3 զորահավաք և 3 փորձնական զորահավաք:

Իր նվաճումների (достижение) խոշոր կողմերով այժմ գունդը մեր բանակի շարքերում գրավում և գլխավոր տեղերից մեկը:

Այժմ հոկտեմբ. հեղ. 10-րդ տարեդարձին մեր գունդը կազմակերպության ղեկավարության շնորհիվ զգալիորեն քաղաքականապես հասունանում է: Այսօր, յերբ լրանում է պրոլետարական մեծ տոնի 10-ամիակը, պիտի կոչել հավերժ հիշատակ այն մարտիկներին, վորոնք զոհվել են բանվ. և գյուղաց. ազատագրման վեճ ճանապարհին և կեցցեն այն հորաները, վորոնք պատրաստ են ամեն բույն պաշտպանելու մեր խաղաղ աշխատանքը և հոկտեմբ. հեղ. նվաճումները:

Վեյսալ



Զուեմարագ գյուղը, վորեկ կառուցվում է նոր հիլորոկայան

ՈՍՏԱՎԻԱՆԻՍԸ ԳԱՆՁԱԿՈՒՄ

Հոկտեմբերյան հեղ. 10-րդ տարեդարձի էրբ խորհրդային իշխանությունը վերջնականապես ցույց է տալիս, վոր նա ամուր և և անհաղթելի յե, Բայց և այնպես այսօր տոնելով մեր հաղթանակի օրը չպիտի մոռանալ մեր յերկրի պաշտպանության ինդիբը, վորովհետև քանի մենք ամբանում ենք, այնքան էլ մեր թշնամին գաղաղվում է և ամեն բույն պատրաստ է մեզ կծելու:

Յերկրի պաշտպանության ինդրում մեծ դեր ունի խաղալու Ոստավիտիսիմը, վորով մեզ մոտ իր սկիզբն է առնում մինչև 25 թիվը, այդ ժամանակ կար ողային նավատորմի բար. ընկ. (Օ. Դ. Բ. Փ.) և քիմիական բարեկամների ընկեր. (Օ. Դ. Մ.) 25 թվին զրանք ձուլվում են և կազմվում է մի ընկերություն — Դորբոտիմ: Ազազայում այս ընկերությունն ևս ձուլվում է պանպանությանն աջակցող ընկերության հետ (общество обороны страны) կարճ ՕՕՕ և այժմս յերկրի պաշտպանության գործի համար մենք ունենք մի ընկերություն — Ոստավիտիսիմ: Մեր Գանձակի գա-

վառի Ոստավիտիսիմը ընդհանուր միության ընկերության մի մասնիկն է, վորը այսօր զգալիորեն զարգացել է և մասսայական ընույթ է կրում, զա ապացույց է, վոր աշխատավոր մասան բմբոնում է պաշտպանության այդ խոշոր հարցը:

Ներքոհիշյալ թվերը բնորոշում են միության ներկա պատկերը:

1. Գործարանային բջիջներ կա 9-ը 1,400 անգամով, 2. գյուղական 24 1,200 անդ., 4. խորհրդային հիմնարկությունների 31 1,150 անդ., 4. ղեկավորական 3 800 անդ., 5. գլորոցական 5 բջիջ 600 անդ. ընդամենը 72 բջիջ է 5,250 անդամներով:

Յեթև այս թվերը համեմատելու լինենք համապատասխան անցյալի թվերի հետ, կստացվի հետևյալ պատկերը. 1926 թ. ունեյինք 56 բջիջ 2,070 անդամներով, ազիլացումը 155 %-ի յե հասնում, իսկ բջիջներինը 30 %-ի:

Այս թվերը ցույց են տալիս, վոր պաշտպանության գործը աշխատավորությունն ինքն իր ձեռքն է վերցնում և իզուր են կապիտալիստական գիշատիչներն ու նրանց լակեյները հույս գնում մեր անկման

4058-2011

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Российской Академии Наук
СССР

ՄԵՏ. ԿԱՆ ԳՐԱԳՐԱԾ
ԳՑ. ԲԻԲԼԻՏԵԿԱ
ՀՄՈՒ-ԱՐՄ.ՍՍՐ
Մ. Ա. ՄԵՇԿԱԿԻՆ
1924

վրա: Չէ՞ վոր վերոհիշյալ թիվը վերաբերում են միայն մի գավառի և այդ թիվը միութայն մաշտաբով միլիոնների յե հասնում: Յե՞վ այսոր Գանձակի բանվորներն ու գյուղացիները տոնելով մեր հաղթանակի 10-րդ տոնը ամբողջ աշխարհի պրոլետարիատի հետ միասին, պետք և ել ավելի ուժեղացնել պաշտպանութայն գործը և այսորվա մեր լոզունգը պիտի լինի

«Վնչ մի բանվոր, գյուղացի և աշխատավոր մարդ չպետք և դուրս մնա Ոստավտիսիմի շարքերից»:

Այսորվանից մենք ավելի զարկ պիտի տանք լայնացնելու մեր աշխատանքը յերկրի պաշտպանութայն գործում:

Խաչատրյան

Հ Ս Վ Ա Ն

Ծնվեց մեծ հսկան...
Հսկան:
Յերկրի շատ ծայրեր,
Շատ սիրող մայրեր
Կիսփապեյին
Նրան:
— Ումնից նա ծնվեց,
Ումնից շունչ առավ...
Թավշյա բարձերի,
Փափուկ գորգերի,
Մեծ պարսնների
Ու դղյակների
Տերերից ծնվեց
Հսկան...
— Վնչ:
Լաց ու արցունքի,
Մեծ տառապանքի,
Ցավ ու տանջանքի
Ծոցից նա ծնվեց...
Հսկան:
— Յերկրից խորթացած,
Խոր նկուղների
Բնակիչների
Սրտերից ծնվեց
Հսկան:

Ահա այդ հսկան,
Մեծ Հոկանմբերը,
Վոր պետք և լինի
Ամբողջ աշխարհի
Ավետաբերը...
Այսոր տանումյա
Մանուկ հասակում—
Պիտ հաղթամարե,
Պիտ դեկավարե
Հսկան:

Արսաբու Գառ

**ԳԱՆՁԱԿԻ ԳԱՎԱՌԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՌՈՂՋԱ-
ՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՅՅԱՆՈՒՄ ՅԵՎ ԱՅԺՄՍ.**

Գանձակի գավառում շրջանային գյուղական հիվանդանոց առաջին անգամ հիմնվել և Ղարաչինար գյուղում 1910 թ. իսկ հետագայում ել 2 բուժակիտ Մանդեր և Զաղլից գյուղերում: Ղարաչինարի հիվանդանոցն ունեցել և 6 մահճակալ: Բուժակիտերն ևլ ստանալով պետական գանձարանից նյութական չնչին միջոցներ, հարկավոր ոգնություն չէին կարողանում հասցնել ժողովրդին, ոգավում էլին միայն կարվածատերերը և ունեկորներն, իսկ ժողովրդի առողջապահան գործը հանձնված էր կախարչներին:

Մոտակա բժիշկը գտնվում էր 120 վերստի վրա, յերթեկեկ հիվանդների թիվը տարեց-տարե աճում այնչափ, վոր բժիշկն որվա ընթացքում ընդունում է 250 հիվանդ:

Հիվանդանոցում սանիտարաառողջապահական և աննդի գործն այնչափ անբավարար էր, վոր հիվանդը գերադասում էր կախարչին:

Յերթեկեկ հիվանդների բժշկությունը հանձնված էր բուժակին, վորն առանց յերկար մտածելու, աջ ու ձախ բաժանում էր նախորոք պատրաստած փոշին (парашок) «գլխացավի», «աչքացավի» և այլն: Այդ իսկ ժամին տեղի բժիշկը, պրիստավի կամ հաշտարար դատավորի մոտ զբաղված էր թղթխաղով ու խնջույքով:

Նախանձելի վիճակում չեր առողջապահական գործը և քաղաքում:

1902 թ. քաղաքում կանոնավորվում է մի հիվանդանոց 30 մահճակալով, հետևյալ տարին բացվում է վարակիչ հիվանդությունների բաժանմունք, իսկ 1904 թ. բանտի հիվանդանոցը 20 մահճակալով:

Այսպիսով համաշխարհային պատերազմի նախորդակին քաղաքն ուներ հիվանդանոցներ ընդհամենը 80 մահճակալով և մի յերթեկեկ հիվանդների բաժանմունք (амбулатория):

Համաշխարհային պատերազմը և տաճկական ֆրոնտի մոտութայն պատճառով քաղաքային ինքնավարութունը մահճակալների թիվը ավելացնում է 70-ով, բաց անելով №№ 1-2-րդ գաղթականական շարժական հիվանդանոցները (лазарет), ուր բժշկասանիտարական և պարենավորման գործի չափազանց անբավարար լինելու հետևանքով, հիվանդները հրաժարվում էին նման բժշկական ոգնությունից:


Պատերազմն անդրադարձավ և գյուղերի վրա, վորի հետևանքով Նոր-Բուլուկ, Բորսունյու և Զարդախլու գյուղերում ևս բացվեցին հիվանդանոցներ 10-ական մահճակալով, իսկ թե վոր չափով սրանք հիվանդանոց էլին, չարժե կանգ առել:

Յեթե ցարի որոք յեղած վերը (հիշած բժշկական) հիվանդանոցները բուժակեաներն ու գեղատները նախանձելի գրություն մեջ չեր, «Մուսավատի» տիրապե-

տութայն ժամանակ այդ յեղածն ևլ թալանի և ավերի մատնվեց, շնորհիվ ավիկար և բախտախնդրը ղեկավարներին:

Այսպիսով վորոքմեկի ժառանգութուն ստացանք Գանձակի խորհրդայնացումով: Պարզ և նման պայմաններում աշխատել անհնարին էր, ամեն ինչի պիտի նոր հիմք դրվեր և մեծ գծավարությամբ կարողացանք 1920 թ. վերջերը կանավորել քաղաքի թյուրքած մասում հիվանդանոց 100 մահճակալով և վարակիչ հիվանդների համար հայց մասում 50 մահճակալով: Հիվանդանոցներից առաջինը, վոր ուներ բաժանմունքներ տերոպտիկական, վիրաբուժական, մանկաբարձական, յերեխայց և ջլային հիվանդությունների, հետագայում կոչվեց Նարիմանովի անունով, 1920 թ. վերջերը հիմնվեց և յերթեկեկ հիվանդների բաժանմունք, իսկ 1921 թ. սկզբներում բացվեց բակտերիոլոգիական լաբորատորիա:

Զուգնթացարար քաղաքում տարվող աշխատանքների հետ, նույնպիսի աշխատանք տարվել է և գյուղում—Վերին-Աղջաքեհի շրջանում, ուր տիֆը և «խսպանկան» անհաշիվ զոհեր էր տանում ավերված գյուղերի ընտելիչներից, բժշկական կեանք բացումն այս շրջանի համար, ժամանակին հասցրված փրկարար միջոցը յեղավ: Նման ամբուլատորիա բացվեց և Յերկրորդ գաղութում, իսկ Զայքենդ, Սաֆիքյուրդ, Ղարալեր, Բայան և Քոլազեր գյուղերում կանավորվեցին հիվանդանոցներ:



Սերնագիչ կայանի քրիստական լաբորատորիան

տեանքով 1927 թ. կազմակերպվում է բժշկական ոգնութայն նորարաց—մանուգի, չթի և յուղի գործարաններում, Սելեկցիոն կայարանում, և Բաղմանլար քաղաքում բացվում են բժշկական կետեր (врач. амбул.) նույնը և Զովգառի Բարեաի հանքում ու Զուրնարատ կառուցվող հիդրոէլեկտրակայանի համար: Նույն թվականին հիմնվեց ու Ռենդենյան կարբինա, վորի սուր կարիքը մեզ մոտ, միշտ ևլ զգացվել է:

Մի հարց, մեզ վորոք գծավարություններ և պատ-

1922 թ. առանձին ուշադրութուն և դարձրվել գոյութուն ունեցող հիմնարկութունների թերութունները լրացնել—լրացուցիչ կանավորում, հիվանդների պարենավորման ուժեղացնում, բժշկական ուլթերի հավասար բախղման վրա և այլն:

Ուշադրութուն և դարձրվել նաև մալարիայի կայանի վրա, վորի շնորհիվ ամենայնուանգուն կռիվն և սարվում Ադրբեջանի մեծ թշնամի—մալարիայի դեմ, տարեց-տարի զգալի կերպով նվազեցնելով հիվանդների %-ը: Այս կայանը Գանձակում բացվեց 1923 թ. հետևյալ տարին բացվեց պոլիկլինիկական մասնագիտական բոլոր բաժիններով:

Աչքաթող չի արվում մանուկ սերնդի առողջապահութայնը, կազմակերպվում է մանկական կոնսուլտացիա, ապաստարան (ясли), և հիվանդանոց 30 մահճակալով ընկ. Արխիվի անվան:

Չեք են աված բոլոր հնարավոր միջոցները, ունենալու Գանձակում բարձր վորակի մասնագետներ:

1925 թ. ժողովրդական առողջապահութայն ցանցը ավելի ևս ընդարձակվում է բացվում են մի շարք հիվանդանոցներ—Շամքոր, Գեղարեկ, Զուրնարատ և Մավանդանոցներ: Բժշկական կետեր (врачебн. амбул.) Շամքոր կայարանում, Գիտրգեակ, գաղութում, Ղարասախկալ, Ախմետլի, Սալախչի, Կարաչինար և Դաստաֆյար գյուղերում, իսկ Իլդարում և Զիրակի ձորում բուժակետեր:

Քաղաքում արդյունաբերութայն զարգացման հե-

ճանել և շարունակվում է, զա հարմար և բավարար չափով շինքեր չունենալու խնդիրն է: Այս ուղղությամբ այժմ տարվում է անընդհատ աշխատանք:

Քաղաքում Նարիմանովի անվան հիվանդանոցն այժմ ունի 200 մահճակալ չունենալով բավարար չենք, Սորնուրդների Համագումարի դիրեկտի համաձայն կառուցվում է վորի առաջին մասն ավարտված է, նաև 2-րդ պոլիկլինիկական կառուցվում են նաև մի շարք նոր շինքեր:

Նոր շենքեր են կառուցվում Սամուխ և Գալմա-
մատլի դայրաններում հիվանդանոցների համար, վեր-
ջապես ծրագրված է 1928 թ. նույնպիսի շենքեր կա-
ռուցել Աղջաքենդի դայրում և դաստաֆայրում: Գայ-
րաներում կառուցվող և կառուցվելիք հիվանդանոց-
ների շենքերն 32-ական սենյակ, առողջասանիտարա-
կան նորագույն ձևով:

Այսպես ուրեմն, մի գավառ, վորն ընդամենը 10
տարի առաջ գավառի ընդարձակ տարածութեան վրա
ունեցել է միայն 2 բուժակետ, ուր գյուղացին մո-
տակա բժշկին հասնելու համար պիտի անցներ 120
վերստ, գավառ, վորը կենտրոնում ունեցել է ընդա-
մենը 60 մահճակալով հիվանդանոցներ, յերթևիկ հի-
վանդաների մի բաժնով, ուր բժիշկները տարված խըն-
ջույքներով ու թղթախաղով, ժողովուրդի առողջապա-
հությունը հանձնած են յեղել զանազան տեսակի փալ-
չիների, այժմ նույն Գանձակի գավառը Հոկտեմբերյան
10-րդ տարեդարձին ծածկված է բժշկական այն-
պիսի ցանցով, ուր հման կետերի հեռավորությունը
լեռնային մասում 6—9 վերստ է, տափարակում 10—15
վերստ, ունենալով 47 բուժակետ 430 մշտական մահ-
ճակալ(ներ):

Ղեկավարվելով վ. Ի. Լենինի պատգամներով —
«Վոչ միայն բժշկել, այլ և կանխել» 1920-ից քաղա-
քում հիմնված է սանիտարական բժշկի պաշտոն, վոր-

պիսին և աշխատում է, կատարելով քաղաքի հերթա-
կան աշխատանքները: 1925 թվից նույնպիսի աշխա-
տանք կատարում է գավառական սանիտարական բը-
ժիշկը:

Նույն 25 թ. քաղաքում բացվել է սանիտարա-
կան լուսավորութեան տան, կատարված է գավառ-
սանիտարական քաղաք, վորին կից աշխա-
տում են հասարակական մեղի, մանկան առողջապա-
հության և սանիտարական լուսավորութեան սեկցիա-
ները:

Սկսած 1923 թ. ամենայն տարի ծաղիկ հիվան-
դութեան դեմ պատվաստման կամպանիաներ տանելով,
հիվանդութեան դեպքերը հասցրված է մինիմումի:

Այժմ 10-ամյակին բացվում թոքախտավորների
գիսպանսեր, յենթադրվում է բացել նույնը և վեներա-
կան հիվանդություններին:

Այս և այն առողջապահական ասպարեզում Սոր-
հրդային իշխանութեան կատարած և կատարելիք աշ-
խատանքը:

Մեր անելիքը Հոկտեմբերյան հեղափոխութեան
10-ամյակին. ավելի ևս յեռանոով շարունակենք զար-
գացնել և բարձրացնել առողջապահությունը, թե քա-
նակով և թե վորակով, զարձնելով մեր գավառը Ս. Խ.
Հ. Մ. կուլտուրական վայրերից մեկը:

Շախսախսինսկի



Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ

Մի շարք տեխնիքական անհարմարությունների շնորհիվ, հնարավոր չեղավ
տալու Գավ. կուլտ. և տնտեսական զարգացման լրիվ պատկերը:

Որ. հնարավոր չեղավ տեղավորելու, ժող. լուսավորութեան, հողաշինարարու-
թյան, կոոպերացիայի, գյուղատնտեսութեան, (և մի շարք ուրիշ հողվածներ), վո-
րոնց ասպարեզում անշուշտ ունենք նույնպես խոշոր նվաճումներ:

Խմբագրական կոմիտեի



